ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 460- Ա

18 նոյեմբերի 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔ) ԵՎ 2004-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԱՎԱԳ ՏԱՐԻՔ) ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի ու «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանիների բռնցքամարտի 2020 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանիների բռնցքամարտի 2020 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանիների բռնցքամարտի 2020 թվականի մարզային առաջնության մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

2. Կազմկոմիտեին՝ մրցումների ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանիների բռնցքամարտի 2020 թվականի

մարզային առաջնության անցկացման օրերին ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի համայնքներ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

18.11.2020

X

ԳԵՂԱՄԱՆՈՒԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Digitally signed by SANOSYAN GNI 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020թ. նոյեմբերի 18 -ի
N 460-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔ) ԵՎ 2004-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԱՎԱԳ ՏԱՐԻՔ) ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Վարդանյան Լուսինե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար

Զարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Կարապետյան Սևակ – Մարտունու համայնքապետարանի ԿՄՍ և ընդհանուր հարցերի բաժնի պետ /համաձայնությամբ /

Սարգսյան Գևորգ - ՀՀ բոնցքամարտի ֆեդերացիայի ՀՀ Գեղարքունիքի մարզի պատասխանատու /համաձայնությամբ/

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020 թ. նոյեմբերի 18-ի
N 460-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔ) ԵՎ 2004-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԱՎԱԳ ՏԱՐԻՔ) ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

1. Նպատակն ու խնդիրներն են

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանիների բոնցքամարտի 2020 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- ՀՀ Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության խնդիրների իրականացմանը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը
- մարզիկների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը
- մարզի հավաքական թիմերը համալրելու նպատակով, ի հայտ բերել լավագույն մարզիկներին
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին:

2. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մարզային առաջնությունը կանցկացվի Մարտունու համայնքապետարանի Ս. Միերյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում՝ 2020 թվականի նոյեմբերի 21-22-ին: Թիմերի ընդունելության օրը՝ նոյեմբերի 21-ին ժամը 10^{00}-ին, մարզիկների կշռումը կկայանա նույն օրը ժամը 10^{00}-ից մինչև 11^{00}-ն: Մրցումների սկիզբը՝ ժամը 13^{00}-ին:

3. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել մարզադպրոցների, մարզական ընկերությունների և համայնքների կողմից հայտավորված 2006-2007 թվականներին ծնված (կրտսեր տարիք) և 2004-2005 թվականներին ծնված (ավագ տարիք) պատանի բոնցքամարտիկներին, ովքեր չունեն առողջության հետ կապված խնդիրներ:

Կրտսեր տարիքի պատանիների առաջնությունը կանցկացվի հետևյալ՝ 37-40կգ, 42կգ, 44կգ, 46 կգ, 48կգ, 50կգ, 52կգ, 54կգ, 57կգ, 60կգ, 63կգ,66 կգ, 70կգ, 75կգ, 80 կգ և 90կգ քաշային կարգերում՝ 3 ռաունդ 1,5 րոպե տևողությամբ:

Ավագ տարիքի պատանիների առաջնությունը կանցկացվի հետևյալ՝ 46 կգ, 48կգ, 50կգ, 52կգ, 54կգ, 57կգ, 60կգ, 63կգ, 66 կգ, 70կգ, 75կգ, 80 կգ և +80կգ քաշային կարգերում՝ 3 ռաունդ 2 րոպե տևողությամբ:

Աաջնությունը կանցկացվի բոնցքամարտի միջազգային ֆեդերացիայի և սույն կանոնակարգի համաձայն:

Մարզադահլիճ մուտք գործելիս բոլոր մասնակիցները պետք է ջերմաչափվեն: Բարձր ջերմության դեպքում մասնակցի մուտքը մարզադահլիճ արգելվում է: Մարզիկները, մարզիչները և մրցավարները պետք է գտնվեն պաշտպանիչ դիմակներով: Մենամարտերի ժամանակ մարզիկները հանդես են գալիս առանց դիմակների: Յուրաքանչյուր 30 րոպեն մեկ մարզադահլիճը պետք է օդափոխվի: Կուտակումներից խուսափելու նպատակով մարզիկը մենամարտից հետո պետք է լքի մարզադահլիճը:

4. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Առաջնության անցկացման ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը ու ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիան: Մրցումներն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Թիմերի գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները / ճանապարհածախս, օրապահիկ և գիշերավարձ /:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում 1-ին և 2-րդ տեղեր գրաված մարզիկները կպարգևատրվեն հավաստագրերով և մեդալներով:

7. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Մասնակցության հայտերը՝ հաստատված բժշկի և կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև մարզիկների անձը հաստատող փաստաթղթերը մրցավարական հանձնաժողովին է ներկայացվում մրցումների օրը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020 թ. նոյեմբերի 18-ի
N 460-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔ) ԵՎ 2004-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ (ԱՎԱԳ ՏԱՐԻՔ) ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սարգսյան Գևորգ - Մարտունու քաղաքապետարանի Ս.Մհերյանի անվան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ/
Կարոյան Մարատ - ՀՀ Գեղարքունիքի մարզային և Գավառի մանկապատանեկան մարզադպրոցների բոնցքամարտի մարզիչ /քարտուղար, համաձայնությամբ/
Սահակյան Էդգար - Համբարակ համայնքի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Դավուդյան Մանուշակ - Մարտունու քաղաքապետարանի Ս.Մհերյանի անվան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Բարսեղյան Սամվել - Գավառ քաղաքի մարզադպրոցի և «Սևան» մարզական հասարակական կազմակերպության բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Վարդանյան Հովիկ - Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Քամալյան Անդրանիկ - Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Հովհաննիսյան Գևորգ - Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Մելիքյան Հրաչիկ - Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Շահինյան Վազգեն - Լիճք համայնքի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Սարգսյան Գագիկ - Մարտունու քաղաքապետարանի Ս.Մհերյանի անվան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Խաչատրյան Ժորա - Նորատուս համայնքի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/
Մարգարյան Մհեր - Մարտունու քաղաքապետարանի Ս.Մհերյանի անվան մարզադպրոցի բոնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ